# ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

# Հայաստանում ԵՄ Թվինինգ ծրագիր վիճակագրության ոլորտում (փուլ II)

Ծրագրի 8-րդ եռամսյակ

Եռամսյակային հաղորդագիր՝ հրապարակված ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» Թվինինգ ծրագրի ԹՄԽ գրասենյակի կողմից

Սա ԵՄ *«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ»* Թվինինգ ծրագրի ութերորդ հաղորդագիրն է:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) հետ ԵՄ Թվինինգ ծրագրի փակման արարողությունը կայացավ 2017թ. հուլիսի 7-ին Երևանում Էրեբունի պլազա բիզնես կենտրոնում, որի ժամանակ ծրագրի մասնակիցները, վիճակագրության սպառողները և շահառուները տոնեցին ծրագրի արդյունքները:

Շուրջ 100 մարդ մասնակցում էր միջոցառմանը, ինչով և հաջողությամբ եզրափակվեցին ծրագիրը և ծրագրի հիմնական նպատակները, այն էր՝ աջակցել Հայաստանի պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված վիճակագրության նոր մեթոդաբանություններ՝ պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում ուժեղացնելու միջոցով:

ՀՀ ԱՎԾ նախագահ պրն. Ստեփան Մնացականյանը բացեց միջոցառումը՝ շեշտելով ՀՀ ԱՎԾ համար շոշափելի և նշանակալի ձեռքբերումները և դրական համագործակցությունը ծրագրում ընդգրկված բոլոր գործընկերների միջև:

ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ պրն. Գրեգորի Ցուրիսը նշեց վիճակագրությունը որպես գիտելիքի բանալի հասարակության համար, և շնորհավորեց ծրագրում ընդգրկված կողմերին՝ լավ կատարված աշխատանքի առթիվ:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների առաջին փոխնախարար պրն. Գարեգին Մելքոնյանն ընդգծեց Թվինինգի արժեքավոր լինելը որպես գործիք՝ պետական կառավարման մարմիններում ստանդարտների արդիականացման առնչությամբ:

Դանիայի վիճակագրության տնօրեն պրն. Սյորեն Շյոնինգ Անդերսենը ներկայացրեց «Վարչական տվյալների արժեքը վիճակագրության և Հայաստանի համար ընդհանրապես» խորագրով շնորհանդեսը: *«Ազգային վիճակագրական մարմինը ծառայում է երկրին՝ որպես ժողովրդավարության և տնտեսության հիմքի մեկ մասնիկ, հետևաբար վարչական տվյալները պետք է դիտարկվեն ոչ թե որպես ծախս պետության համար, այլ արժեքավոր ակտիվ»*, նշեց Սյորեն Շյոնինգ Անդերսենը:

Վերջում ծրագրի ղեկավար տկն. Շարլոտ Յուլ Հանսենը և ԹՄԽ պրն. Պիտեր Բոնստեդ Անան Հանսենը մանրամասն ներկայացրեցին ծրագրի հիմնական արդյունքները:

Դանիայի վիճակագրությունը ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց ջանքերը նվիրեցին ծրագրի պարտադիր արդյունքների ձեռքբերմանը և ծրագրի հաջողությանը:



*2017թ. հուլիսի 7-ին Երևանում Էրեբունի պլազա բիզնես կենտրոնում կայացած ծրագրի փակման արարողությունը*

24 ամիս տևողությամբ ԵՄ կողմից 1 մլն եվրո բյուջով ֆինանսավորվող սույն ծրագիրը մեկնարկեց 2015թ. օգոստոսին և իրականացվեց Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից՝ Դանիայի վիճակագրության՝ որպես գլխավոր գործընկեր, և ծրագրի մաս կազմող Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի ազգային վիճակագրական մարմինների փորձագետների հետ համագործակցությամբ:

Ծրագրի հիմնական բաղադրյալներն էին 38 առաքելությունները դեպի Հայաստան, 7 ուսուցողական այցերը դեպի ԵՄ անդամ երկրներ, շահառու մարմին, որն աչքի էր ընկնում բարձր հանձնառությամբ, և 28 որակավորված ԵՄ փորձագետներ:

Ծրագրի ընթացքում ընդգրկվեցին մի շարք հիմնական շահառուներ: Ծրագրի բոլոր բաղադրիչների գծով ՀՀ ԱՎԾ-ն ծավալել է սերտ և արդյունավետ համագործակցություն շահառուների հետ:

Թվինինգ ծրագրի ընթացքում մշակված բոլոր համապատասխան փաստաթղթերը և նյութերը բեռնված են ծրագրի կայք-էջում անգլերեն և հայերեն լեզուներով: Ծրագիրն ունի նաև ֆեյսբուքյան էջ, որը կանոնավոր կերպով թարմացվել է ծրագրի ամբողջ ընթացքում: Գտեք հղումները ստորև.

**Լրացուցիչ տեղեկությունների համար.**
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն (ԹՄԽ)
pah@dst.dk
Հեռ. + 374(0)99077916
Կայք-էջ.www.dst.dk/armenia2015
Ֆեյսբուքյան էջ.www.facebook.com/EU-Armenia-Twinning-Project-on-Statistics-II-801732856606449

## Թվինինգ ծրագրի հիմնական թեմաները

**1. Տարածում և վիճակագրության որակ**
Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ, մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն, սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և հրապարակված հարցաթերթ, առաջարկություններ որակի կառավարման ապահովման վերաբերյալ

**2. Ժողովրդագրական վիճակագրություն**
Բարելավված կենսական և միգրացիոն վիճակագրություն, տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմների ռազմավարություն (թղթային աղբյուրներից անցում վարչական ռեգիստրների)

**3. Աշխատաշուկայի վիճակագրություն**
Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակի վերաբերյալ հաշվարկված և հրապարակված կառուցվածքային վիճակագրություն

**4. Աղքատության վիճակագրություն**
Սոցիալական բացառումների վիճակագրության ներդրում և հաշվարկում (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ)

**5. Ինովացիոն գործունեության մասին վիճակագրություն**
Ներդրված վիճակագրություն ինովացիոն գործունեության մասին, ինովացիոն գործունեության մասին վիճակագրության մշակված մեթոդաբանություն, կանոնավոր արտադրման և հրապարակման պլան

**6. Ջրի հաշիվներ**
Առանցքային շահառուների հետ ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն, ջրի կազմված հաշիվներ

STATISTICS DENMARK

*Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝ Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համատեղ:*

*Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները հանդիսանում են Դանիայի վիճակագրության պատասխանատվությունը և կարող են չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:*